



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

14.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/24

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ռեզնում» ՍՊԸ-ի 14.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. «Ռեզնում» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռեզնում» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 14.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով՝ բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով 3-րդ և 4-րդ չափաբաժիններով հայտ է ներկայացրել «Ռեզնում» ՍՊԸ-ն:

Պատվիրատուի՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովը 19.04.2017թ. սկսված և 03.05.2017թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշման 2.3 կետով մերժել է «Ռեզնում» ՍՊԸ-ի հայտը՝ պատճառաբանելով, որ.

«Հայտով ներկայացված գնային առաջարկը սխալ է ներկայացված՝ մասնավորապես գնային առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ԱԱՀ-ի մասին օրենքի պահանջներին, ինչի հիման վրա գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը մերժել է:»

Որոշման դեմ «Ռեզնում» ՍՊԸ-ն 05.05.2017թ. բողոք էր ներկայացրել ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ: ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդը 02.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/05 որոշմամբ ամբողջովին բավարարել է «Ռեզնում» ՍՊԸ-ի բողոքը և դադարեցրել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները: /Բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/05 որոշումը հրապարակվել է www.gnumner.am կայքում 07.06.2017թ.:/

Հարկ է նշել, որ գնահատող հանձնաժողովը ակնհայտորեն և ընդգծված խախտում է գնումներին վերաբերվող օրենսդրությունը:

Օրենքով բողոքարկման խորհրդի որոշումները իրավապարտադիր են:

Համաձայն ՀՀ կառավարության N 168-Ն որոշման.

«XX. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

115. Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն չի փոփոխվել կամ դատական կարգով անվավեր ճանաչվել:

116. Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվությունն այդ որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գրավոր ներկայացնում է կենտրոն, որը հաշվառվում է կենտրոնում:

121. Եթե տրամադրված պարզաբանման արդյունքում պարզվում է, որ գնումների բողոքարկման խորհրդի ընդունված որոշումը չի կատարվել պատվիրատուի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով կամ սահմանված ժամկետում չի տրամադրվում պարզաբանում, ապա կենտրոնը դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը և այդ տեղեկատվությունը, ինչպես նաև պատվիրատուի պարզաբանումը նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:....»

Քսան աշխատանքային օր հետո, ՀՀ ՊՆ գնահատող հանձնաժողովը՝ այն էլ, պատասխանելով Գնումների բողոքարկման խորհրդի 29.06.2017թ. գրությանը, միայն 01.07.2017թ. թիվ ԴՎԱ/2066 գրությամբ, որը մուտք է եղել ՀՀ ֆինանսների նախարարություն 04.07.2017թ. /մտից 29702/ պաշտոնապես դիմել է Բողոքարկման խորհրդուրդ, առ այն, որ կատարվել են իրավապարտադիր որոշման պահանջները, այն է՝ դադարեցվել են գնահատող հանձնաժողովի որոշումները:

Պատասխանը հրապարակվել է www.gnumner.am կայքում 05.07.2017թ.:

Գնահատող հանձնաժողովը հաստատելով իր գործելաոճում ամենաթողությունը, կամայականություններն ու անպատժելիությունը՝ 10.07.2017թ. կայացրել է հերթական անօրինական որոշումը՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը մեջբերել է Հանձնաժողովի հետևյալ որոշումը.

«...«Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գների հանրագումարը պակաս է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գների հանրագումարից, սակայն «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գները 1369 տողում բարձր են պատասխանատուի կողմից սահմանված նախահաշվային միավորի գներից: «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ քննարկելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, կից միավորի գները (Հավելված 4, Հավելված 4.1) և հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները (Հավելված 4-ում սահմանված) որոշեց 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին:

Կայացվել է նաև որոշում ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Անգործության ժամկետ է սահմանվել 10 օրացուցային օր»:

Ընկերությունը հավելում է.

«ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» որոշման 11-րդ կետով հստակ սահմանված են Պատասխանատուի գործառույթները.

11. Պատասխանատու՝

1) ստորաբաժանումը՝

ա. կազմում և հաստատում է գնման հայտը,

բ. հետևում է պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացի նկատմամբ,

գ. ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը,

դ. ներկայացնում է այն անձանց (թեկնածուների) ցուցակը, որոնք առաջադրվում են գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով,

ե. անհրաժեշտության դեպքում առաջարկ է ներկայացնում գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

2) ստորաբաժանում կարող են սահմանվել պատվիրատուի՝

ա. համապատասխան ստորաբաժանումը,

բ. ձևավորած մասնագիտական խումբը, որի կազմում կարող են նաև ընդգրկվել այլ մարմինների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ.

3) ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին:»:

Ակնհայտորեն հանձնաժողովը միտում ունի չարաշահելու իր լիազորությունները և կայացնելու կամայական որոշումներ, քանի որ օրենքով նախատեսված և ամրագրված չէ, որ Պատասխանատուն իրավասու է սահմանելու նախահաշվային գներ՝ առավել ևս դրանք կանխակալ տրամադրելու մասնակիցներից որևէ մեկին, տվյալ դեպքում հաղթող ճանաչված ընկերությանը, քանի որ ըստ էության նրա ներկայացրած գնային առաջարկում ամեն ինչ համընկել է:

Ինչ վերաբերվում է Հավելված 4-ի հղմանը, այն վերաբերվում է ոչ թե 4.1 հավելվածով ներկայացված 6343 տողից յուրաքանչյուրին, այլ այդ տողերի հանրագումարին, որը ի վերջո դարձել է տող և գրվել հավելված 4-ի համապատասխան չափաբաժնի համար նախատեսված տողում՝ քանի որ հավելված 4-ում նախատեսված է նաև, որ՝

«Եթե մասնակցի ներկայացրած յուրաքանչյուր չափաբաժնի միավորների գները կգերազանցեն տվյալ տողի համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, ապա մասնակցի հայտը կգնահատվի ոչ շահավետ և կմերժվի, եթե առկա լինի այլ շահավետ առաջարկ»:

Կարծում ենք, որ «հատկացված ֆինանսական միջոցների չափը» պետք է հասկանալ ոչ թե առանձին տողում նախատեսված որևէ ապրանք կամ ծառայություն, այլ ամբողջ չափաբաժնի համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի»:

Որպես բողոքի փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ Ընկերությունը նշել է հետևյալը.

«Հանձնաժողովը կրկին և միտումնավոր սխալ է մեկնաբանել ՀՀ ֆինանսների նախարարի «Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի օրինակելի ձևը հաստատելու մասին» 2016թ. հուլիսի 20-ի թիվ 605 -Ա հրամանով հաստատված հավելվածները՝ մասնավորապես հավելված 4-ը, որտեղ առկա է հետևյալ հղումը.

«*Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:»:

ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» որոշման 2-րդ և 3-րդ կետերով սահմանվում է.

«2. Սույն կարգով հրավերին և պայմանագրին ներկայացվող պայմանները հանդիսանում են հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները: Հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն: Ընդ որում, գնման գործընթաց կազմակերպելիս պատվիրատուներն առաջնորդվում են լիազոր մարմնի սահմանած հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերով:

3. Գնման գործընթացի առանձնահատկություններով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարող են սահմանվել սույն կարգի 1-ին կետով նախատեսված կարգերի կիրարկման, ինչպես նաև հրավերի և պայմանագրի հիմնական պայմանների հետ կապված՝ սույն կարգով չնախատեսված նորմեր:

«Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից 1369 տողում բարձր գին առաջարկելու հետևանքով նրան առաջին տեղ չճանաչելու՝ Հանձնաժողովի հիմնավորման մասին Ընկերությունը հայտնում է հետևյալը.

«Հանձնաժողովը չի ներկայացրել նաև, թե նշված որ 1369 տողերում է «Ռեգնում» ՍՊԸ-ն առաջարկել բարձր գին, որքան է կազմում այդ բարձր գների հանրագումարը, որտեղ է հրապարակված եղել Պատասխանատուի սահմանած նախահաշվային գները:

Ընկերությունը կատարել է վերլուծություն՝ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների մասով.

«Հավելված 4.1-ը պարունակում է 6343 տող, որից 5567-ը պահեստամասեր և նյութեր, իսկ 776- ը՝ աշխատանքներ:

Համեմատելու համար չունենալով Պատասխանատուի կողմից «սահմանված նախահաշվային գները», համեմատել ենք «Ռեգնում» և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ների ներկայացրած գնային առաջարկները և պարզել ենք, որ պահեստամասերի համար.

1456 տողով «Ռեգնում» ՍՊԸ-ի առաջարկած գինը բարձր է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի առաջարկած գնից, տարբերության ընդհանուր գումարը կազմում է 3.206.000 /երեք միլիոն երկու հարյուր վեց հազար/ դրամ, կամ միջինը տողի կտրվածքով՝ $3.206.000/1456=2201.92$ դրամ /երկու հազար երկու հարյուր /:

15 տողով առաջարկվել է հավասար գին:

4096 տողերով մեր կողմից առաջարկվել է ցածր գին, տարբերության ընդհանուր գումարը կազմում է 297.983.000 /երկու հարյուր ինիսունյոթ միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար/ դրամ, կամ միջինը տողի կտրվածքով՝ $297\ 983\ 000/4096=72749.75$ դրամ /յոթանասուներկու հազար յոթ հարյուր քառասունինը/:

Բացի այդ, Պատվիրատուի՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով ներկայացրած հավելված 4.1-ում առկա են եղել 200-ից ավելի կրկնվող տողեր՝ նույն պահեստամասերի նույն կոդավորումներով, որոնց համար «Ռեգնում» ՍՊԸ-ն ներկայացրել է նույն գները, իսկ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն՝ նույն կրկնվող պահեստամասերի համար ներկայացրել է իրարից էականորեն տարբեր՝ նաև հիմնականում, առանձին դեպքերում «Ռեգնում» ՍՊԸ-ի առաջարկած գներից էապես տարբեր՝ բարձր գին /տվյալները վերցված են armeps.am կայքից:

Օրինակ՝

Հ/Հ	Անվանում	Պահեստամասի կոդը	ՌԵԳՆՈՒՄ	ԼԱՎ ԸՆԿԵՐ	Տարբերություն դրամ
4076	Պ/մաս	161-3509012	77000	148625	71625
4078	Պ/մաս	161-3509012	77000	153700	76700
4407	Պ/մաս	210-2204080-Բ2	43000	103675	60675
4409	Պ/մաս	210-2204080-Բ2	43000	232000	189000
4771	Պ/մաս	222-2502010-Ա	410000	1419650	1009650
4772	Պ/մաս	222-2502010-Ա	410000	326250	-83750
4775	Պ/մաս	260Դ-2502010	1104000	1464500	360500
4776	Պ/մաս	260Դ-2502010	1104000	2549100	1445100
4377	Պ/մաս	ПЖД-44-1015010	147000	217355	70355
4557	Պ/մաս	ПЖД-44-1015010	147000	414700	267700

Հարց է առաջանում՝ թե պայմանագիր կնքելու պարագայում նույն պահեստամասերը առաջարկված գներից որ գնով էր մատակարարվելու և նաև, տվյալ դեպքում ոնց են համընկել Պատասխանատուի սահմանած նախահաշվային գները:

Սա նույնպես ապացույցն է գնահատող հանձնաժողովի անիրազեկության, որոշումներ կայացնելու ուղղվածության, անհարկի, ցանկացած միջոցներով նախընտրելի մասնակցին ընտրելու, ամենաթողության և անպատժելիության:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Խախտվել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ հոդվածների, 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ N 168-Ն որոշման 2-րդ, 3-րդ և 11-րդ կետի պահանջները:

Հանձնաժողովը առանց հայտերի գնահատման նիստի և առանց արձանագրություն կազմելու, ուղղակի իր 10.07.2017թ. հայտարարությունով որոշել է սկսել պայմանագրի կնքման գործընթացը, որի մասին հայտարարություն է տեղադրվել կայքում:

10.07.2017թ. հայտարարության մեջ նշված է. «Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշը՝ ամենացածր գին»:

Այդ չափանիշով ամենացածր գինը առաջարկել է «Ռեգնում» ՍՊԸ-ն:

Բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքի վերաբերյալ բողոքարկման խորհրդի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ Ընկերության հետագա գործունեության վրա, ինչպես նաև ՀՀ գնումների մասին օրենսդրության միատեսակ կիրառության համար, մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ամրագրված սկզբունքների կիրառումը՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»:

Նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով:

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:»

Խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի 1-ին կետի պահանջները:

«1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով... »

Առկա է գնումների գործընթացի, գնումները կարգավորող օրենսդրական այլ ակտերի պահանջների խախտում, կամ դրանց այլ կամայական մեկնաբանություններ, նաև միտում՝ հանձնաժողովի կողմից, նույնիսկ առանց հիմնավորումների, ցանկացած մեթոդներով նախընտրելի մասնակցին հաղթող ճանաչելու համար, որոնք հանգեցրել են գնումների մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքի խախտման:

Ելնելով վերոգրյալներից և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը, 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 31-րդ հոդվածի 1 ին և 2-րդ մասի 1-ին կետը, 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, 48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը և 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 49-րդ հոդվածի 1-ին կետը,

Խնդրում եմ.

1. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 10.07.2017թ. հրապարակված որոշումը՝ 3-րդ չափաբաժնով «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին 1-ին տեղ ճանաչելու մասին որոշումը:

2. Կայացնել ժամանակավոր միջոց կիրառելու մասին որոշում՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից 10.07.2017թ. կայացված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

Խորհրդի 20.07.2017թ., 01.08.2017թ. և 03.08.2017թ. նիստերին մասնակցում էին «Ռեզնում» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Կարո Կապլանյանը և Գուրգեն Ֆրանգուլյանը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 25.07.2017թ. թիվ ԴՎԱ/2463 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾԶԲ-4/2» • ծածկագրով շրջանակային համաձայնագրերի կնքման միջոցով գնում կատարելու ընթացակարգին 3-րդ (ԿՐԱԶ մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում) և 4-րդ (ԶԻԼ մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում) չափաբաժիններով հայտ էր ներկայացրել նաև «Ռեզնում» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 09104083):

Գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 առ 03.05.2017թ. արձանագրության 2.3 կետով «Ռեզնում» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ԱԱՀ-ի թերի հաշվարկի հիմքով: Ընկերության կողմից 15.05.2017թ-ին բողոքարկվել է հանձնաժողովի որոշումը, պահանջելով դադարեցնել գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 առ 03.05.2017թ. արձանագրությամբ «Ռեզնում» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը: ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված «ԳԲԽ-ԷՍ-2017/05» առ 02.06.2017թ. որոշմամբ

բավարարվել է «Ռեզնում» ՍՊԸ-ի բողոքը: Որոշումը հրապարակվել է 07.06.2017թ-ին և գնահատող հանձնաժողովը 08.06.2017թ-ին օրենքով սահմանված կարգով կատարել է որոշման պահանջները:

«ԳԲԽ-ԷՍ-2017/05» բողոքի վերաբերյալ մեր դիրքորոշումը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ 24.05.2017թ N°1525/ԴՎԱ գրությամբ ներկայացվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որում մասնավորապես նշված է, որ.

- «Ռեզնում» ՍՊԸ-ի կողմից, սահմանված կարգով, ներկայացրած գնի առաջարկը (հաշվարկային փաստաթուղթ) ներառում է ԱԱՀ-ի գումարի առանձնացում և այն արտացոլված է ԱԱՀ-ի հաշվարկի համապատասխան տողում, որը չի կազմում սահմանված 20 տոկոսը,

- «Ռեզնում» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված 4.1 հավելվածում թվով 8 անվանում ավտոպահեստամասերի մասով ներկայացվել են 0 դրամ, ինչը արհեստածին է և չհիմնավորված,

- «Ռեզնում» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված 4.1 հավելվածում շուրջ 1370 անվանում ավտոպահեստամասերի գները գերազանցում են տվյալ տողի համար հատկացված ֆինանսական միջոցների չափը (սահմանված առավելագույն գնից բարձր գնային առաջարկ), ինչը մտահոգության տեղիք է տալիս:

Գնահատող հանձնաժողովի 08.06.2017թ. նիստի N°6 արձանագրությամբ կասեցվել է հանձնաժողովի աշխատանքները և N°N°ԴՎԱ/1784, ԴՎԱ/1785 առ 13.06.2017թ համապատասխան գրություններով դիմել ենք ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ՝ ստանալու պարզաբանում, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշման մեջ հստակ նշված չէ արդյոք հաշվի է առնվել մեր կողմից ներկայացված դիրքորոշման 2-րդ և 3-րդ պարբերությունների բովանդակությունը, թե ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը վերաբերվում է միայն 1-ին պարբերությանը: ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ մուտք N°4521 առ 29.06.2017թ. և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ մուտք N°4299 առ 23.06.2017թ. գրություններով ստացվել է պարզաբանում, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը վերաբերվում է միայն 1-ին պարբերությամբ նշված բովանդակությանը:

Գնահատող հանձնաժողովը վերը նշված գրությունների բովանդակությանը ծանոթանալուց հետո 10.07.2017թ-ին հրապարակել է որոշում՝ համաձայն որի 3-րդ

չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին, ինչը 14.07.2017թ-ին «Ռեզնում» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է:

Ի պատասխան Ձեր N°ԳԲԽ-ԷՍ/1/13136-17 առ 18.06.2017թ. գրության հայտնում եմ հետևյալ դիրքորոշումը, որ N°3 չափաբաժնով (ԿՐԱԶ մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում) անվանատողը բաղկացած է 776 անվանում ծառայությունների անվանատողերից և 5567 անվանում ավտոպահեստամասերից, որոնց անվանացանկը և միավորի նախահաշվային գները հաստատվում են ՀՀ պաշտպանության նախարարի կողմից:

«ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾԶԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի կնքման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 4-րդ հավելվածով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ ծառայությունների յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջարկվող ընդհանուր գումարով, ընդ որում Հավելված N 4-ում լրացվում է Հավելված 4.1-ի /Հրավերին կից ներկայացված է Excel տարբերակով/ ընդամենը ստացվող միավորի գների հանրագումարը: Հավելված 4.1 պարտադիր լրացվում և կցվում է Հավելված 4-ին: Եթե մասնակցի ներկայացրած յուրաքանչյուր չափաբաժնի միավորների գները կգերազանցեն տվյալ տողի համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, ապա մասնակցի հայտը կգնահատվի ոչ շահավետ և կմերժվի, եթե առկա կլինի այլ շահավետ առաջարկ: Այլ առաջարկի բացակայության դեպքում սույն հրավերով սահմանված կարգով կվարվի գների նվազեցման շուրջ բանակցություններ:

Հրավերով նախատեսված է, որ չափաբաժնի գինը գոյանում է ծառայությունների և ավտոպահեստամասերի գների հանրագումարից: «Ռեզնում» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված 4.1 հավելվածով ծառայությունների գները բարձր են առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնային առաջարկից, մասնավորապես՝ «Ռեզնում» ՍՊԸ-ն ծառայությունների մասով առաջարկել է 17 000 400 ՀՀ դրամ, իսկ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն 14 780 450 ՀՀ դրամ, ինչպես նաև ավտոպահեստամասերի մասով «Ռեզնում» ՍՊԸ-ն առաջարկել է 443 384 870 ՀՀ դրամ, իսկ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն 738 162 420 ՀՀ դրամ, սակայն «Ռեզնում» ՍՊԸ-ի առաջարկած գները 1369 անվանում ավտոպահեստամասերի մասով գերազանցել են տվյալ տողի համար հատկացված ֆինանսական միջոցների չափը (սահմանված առավելագույն գնից բարձր գնային առաջարկ), հետևաբար, գնահատող հանձնաժողովը, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին:

Նշեմ նաև, որ 2016թ. դեկտեմբերի 7-ին կնքված №ՇՀԾՁԲ-4/5-2 պայմանագրի կատարողականի մասով «Ռեզնում» ՍՊԸ-ին տրվել է 100% կանխավճար 80 000 000 ՀՀ դրամի չափով, սակայն ընկերության կողմից ծառայությունները մատուցվել են մասնակի և չկատարված՝ մնացորդային գումարը կազմել է 12 972 810 ՀՀ դրամ, հետևաբար №ՇՀԾՁԲ-4/5-2 պայմանագիրը իր կողմից նշված մեծ պատասխանատվությամբ չի կատարվել: Համաձայն ՀՀ ՁՈՒ ՍՎ պետի №512-1063 առ 29.05.2017թ. գրության՝ վերանորոգման հայտերը ներկայացվել են «Ռեզնում» ՍՊԸ-ին, սակայն վերջինիս կողմից 1 միավոր կցասայլը և 2 միավոր շարժական լիցքավորող էլեկտրակայանները չեն վերանորոգվել:

Ավելին՝ ՀՀ ՊՆ ՌՈ պետի №518/3250 առ 07.07.2017թ. գրության համաձայն՝ «Ռեզնում» ՍՊԸ-ն մինչև 24.04.2017թ-ը պետք է վերանորոգեր 4 միավոր Հինո 700 տեսակի քարշակներ, թվով 3 միավոր Դ-12 Ա 525 տեսակի շարժիչ, թվով 2 միավոր շարժական լիցքավորող էլեկտրակայաններ և թվով 1 միավոր կցորդ, սակայն 15.06.2017թ-ին ՌՈ աշխատակիցների այցելության ժամանակ «Ռեզնում» ՍՊԸ-ի արհեստանոցում առկա է եղել թվով 2 միավոր Հինո 700 տեսակի քարշակ՝ անսարք վիճակում և թվով 2 միավոր Դ-12 Ա 525 տեսակի շարժիչ՝ վերանորոգված վիճակում: Վերը նշված փաստի վերաբերյալ ՀՀ ՊՆ ՌՈ հետաքննչական բաժանմունքում 26.06.2017թ. նախապատրաստվել են նյութեր և 06.07.2017թ-ին ուղարկվել ՀՀ կենտրոնական զինվորական դատախազություն:

Հաշվի առնելով վերոգրյալը կարծում եմ, որ «Ռեզնում» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա չէ բավարարման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի ներկայացուցիչ ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱԴ ԳՓՁ վարչության առաջատար մասնագետ Արմեն Սիմոնյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Ռեզնում» ՍՊԸ-ի 14.06.2017թ. թիվ Դ-096 գրությամբ ներկայացրած բողոքը, «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) կողմից 2017թ. ապրիլի 7-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարի

կողմից 21.03.2017թ հաստատած անվանացանկը, «Ռեգնում» ՍՊԸ-ի և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները, Հանձնաժողովի 19.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, Հանձնաժողովի 2017թ. հուլիսի 10-ի որոշմամբ հաստատված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, Պատվիրատուի ներկայացուցչի դիրքորոշումը և կարծիքը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.07.2017թ. թիվ ԴՎԱ/2463 գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման նապատակով հայտարարել է ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «Ռեգնում» ՍՊԸ-ն և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի կողմից 19.04.2017թ. թիվ 3 արձանագրությամբ ընդունված որոշմամբ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Նույն արձանագրությամբ ընդունված որոշմամբ Հանձնաժողովը մերժել է «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը:

«Ռեգնում» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է «Ռեգնում» ՍՊԸ-ի՝ նույն չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը: Որպես կայացված որոշման հիմնավորում՝ Պատվիրատուն Հանձնաժողովի 2017թ. հուլիսի 10-ի որոշմամբ հաստատված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ նշել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը որոշվել է ըստ յուրաքանչյուր չափաբաժնի յուրաքանչյուր միավորի (պահեստամասի և ծառայության) գների հանրագումարի: Ըստ այդմ, «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գների հանրագումարը պակաս է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գների հանրագումարից, սակայն «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գները 1369 տողում բարձր են սահմանված նախահաշվային գներից: Հանձնաժողովը, քննարկելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, կից միավորի գները (հավելված 4, հավելված 4.1) և հիմք ընդունելով Հրավերով սահմանված պահանջները, որոշել է նշված չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի 4-րդ հավելվածով՝ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն առաջարկել է պայմանագիրը կատարել 752 942 870 (յոթ հարյուր հիսուներկու միլիոն ինը հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամով, որից 14 780 450 (տասնչորս միլիոն յոթ հարյուր ութսուն հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ծառայությունների համար, իսկ 738 162 420 (յոթ հարյուր երեսունութ միլիոն մեկ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամը՝ պահեստամասերի համար առաջարկված գինն է:

Նույն հավելվածով «Ռեզնում» ՍՊԸ-ն առաջարկել է 460 385 270 (չորս հարյուր վաթսուն միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գնային առաջարկ, որից 443 384 870 (չորս հարյուր քառասուներեք միլիոն հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր յոթնասուն) ՀՀ դրամը՝ ծառայությունների համար, իսկ 17 000 400 (տասնյոթ միլիոն չորս հարյուր) ՀՀ դրամը՝ պահեստամասերի համար առաջարկված գինն է: Այսինքն, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար «Ռեզնում» ՍՊԸ-ի գնային առաջարկը 277 777 150 (երկու հարյուր յոթանասունյոթ միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր հիսուն) ՀՀ դրամով նվազ է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի գնային առաջարկից:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ «Ռեզնում» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար մեկ թվով ներկայացված ընդհանուր գնային առաջարկը ցածր է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի՝ նույն չափաբաժնի համար ներկայացված գնի առաջարկից, թեև պնդեց 25.07.2017թ. թիվ ԴՎԱ/2463 գրությամբ հայտնած դիրքորոշումը, որ «Ռեզնում» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված 4.1 հավելվածում շուրջ 1370 անվանում ավտոպահեստամասերի գները գերազանցում են տվյալ տողի համար հատկացված ֆինանսական միջոցների չափը:

Ընթացակարգի հրավերի Մաս I-ում նշվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերումը: Ընդ որում, գնման առարկան բաժանված է 5 չափաբաժինների, որոնցից երրորդը՝ ԿՌԱԶ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերումն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2017թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի՝ տվյալ դեպքում՝ հրավերի N4 հավելված հանդիսացող գնի առաջարկի օրինակելի ձևով սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջարկվող ընդհանուր գնով:

Հանձնաժողովի 2017թ. հուլիսի 10-ի որոշմամբ հաստատված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.1.4 կետով սահմանվել է, որ հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Հրավերի N4 հավելված հանդիսացող գնի առաջարկում որպես ծանոթություն սահմանվել է հետևյալը.

«Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ ծառայությունների յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջարկվող ընդհանուր գումարով, ընդ որում Հավելված N 4-ում լրացվում է Հավելված 4.1-ի (Հրավերին կից ներկայացված է Excel ձևաչափով) ընդամենը ստացվող միավորի գների հանրագումարը: Հավելված 4.1-ը պարտադիր լրացվում և կցվում է Հավելված 4-ին: Եթե մասնակցի ներկայացրած յուրաքանչյուր չափաբաժնի միավորների գները կգերազանցեն տվյալ տողի համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, ապա մասնակցի հայտը կգնահատվի ոչ շահավետ և կմերժվի, եթե առկա կլինի այլ շահավետ առաջարկ: Այլ առաջարկի բացակայության դեպքում սույն հրավերով սահմանված կարգով կվարվեն գների նվազեցման շուրջ բանակցություններ:»:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 44-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը: Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի Հրավերով նախատեսված 3-րդ չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում՝ ԿՌԱԶ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) տեխնիկական սպասարկման ծառայությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար մեկ թվով ներկայացված ընդհանուր գնային առաջարկը ցածր է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի՝ նույն չափաբաժնի համար ներկայացված գնի առաջարկից:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, Հրավերով որպես գնային առաջարկի ներկայացման պարտադիր պայման սահմանելով հավելված 4.1-ը՝ խախտել է Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը, քանի որ հայտերը պետք է գնահատվեին Հրավերով նախատեսված կարգով՝ ըստ առանձին չափաբաժինների, և Հանձնաժողովը, մասնակիցների գնային առաջարկները գնահատելիս՝ հավելված 4.1-ով կից ներկայացված միավորի գները հիմք ընդունելով և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին նշված չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին խմբավորում ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին, եթե դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

Խորհուրդը գտնում է նաև, որ Պատվիրատուի այն պնդումը, որ N3 չափաբաժնով (ԿՌԱԶ մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում) անվանատողը բաղկացած է 776 անվանում ծառայությունների անվանատողերից և 5567 անվանում ավտոպահեստամասերից, որոնց անվանացանկը և միավորի նախահաշվային գները հաստատվել են ՀՀ պաշտպանության նախարարի կողմից, հետևաբար գնահատումը պետք է իրականացվեր ըստ նշված անվանացանկի առանձին տողերի համար նախատեսված միավորի նախահաշվային գները հաշվի առնելով, անհիմն է, քանի որ նշված ձևով գնահատում իրականացնելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատված անվանացանկի յուրաքանչյուր տողը պետք է Հրավերով սահմանվեր որպես առանձին չափաբաժին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի գրավոր դիրքորոշման մեջ նշված՝ 2016թ. դեկտեմբերի 7-ին կնքված N ՇՀԾՁԲ-4/5-2 պայմանագրի կատարման շրջանակներում «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից դրսևորած վարքագծին և դրա հետևանքով Պատվիրատուի կողմից իրականացված գործողություններին, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված փաստերը սույն բողոքին վերաբերելի չեն:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ռեգնում» ՍՊԸ-ի 14.07.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:


2. Դադարեցնել՝ Հանձնաժողովի կողմից 10.07.2017թ. «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին ընդունված որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ